# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 ապրիլի 2015 թվականի** **N49-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (68-3.2-35) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի, **ո ր ո շ ու մ եմ.**

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 68-3.2-35) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

| | |
|---|---|
| Ավետիսյան Արմեն | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ |
| Բարսեղյան Կարեն | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ |
| Կարապետյան Գալյա | մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ |
| Գրիգորյան Արսեն | Մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ |
| Հակոբյան Գագիկ | <<Կապանի թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ ուսմասվար |
| Եղիազարյան Անիկ | ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի դասախոս |

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Կարեն Բարսեղյանին, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ Արմեն Ավետիսյանին:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2015թ.ապրիլի 14*
*ք. Կապան*